

## Արտակ Ասատրյան

Դայոց ազգագրության և ազատագրական պայքարի  
պատմության ազգային թանգարան, գիտաշխատող

Գիտ. դեկ.՝ պ. գ. թ., դոց. Մ. Գաբրիելյան  
էլ. փոստ՝ [artaksardarabad@mail.ru](mailto:artaksardarabad@mail.ru)

### ԴԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՍՎԱՐԱՆԻ ՄԻԽԻՆԵՐԻ ԴԱՎԱԲԱԾՈՒՆ

ԴԱՅՈՑ (ՍՅՈՒՆԱՊՊԱԹ) -ի «Ակ-3» ֆոնդում պահպանվում է շուրջ 2500 առարկա:  
Այս առարկաների ճնշող մեծամասնությունը XIX դարի վերջի և XX դարի սկզբի  
պղնձագրուժական արտադրանք են: Այս արտադրանքը բաժանվում է երկու մեծ խմբի:

1. Եկեղեցական սպասք (թասեր, զանգեր, բուրվառներ, խնկամաններ,  
աշտանակներ և այլն) և կենցաղային սպասք: Վերջինս կարելի է բաժանել  
առանձին համալիրներ.
2. Խոհանոցային սպասք (կաթսաններ, թավաններ, շերեփներ և այլն), ճաշի  
սպասք (ափսեններ, թաս-փիալաններ և այլն), կաթնամշակման պարագաներ  
(կովկիթներ և այլն):

Դավաքածուում կարելի է առանձնացնել գործարանային արտադրության և  
արարատառ արձանագրություններով իրերի խմբերը: Գործարանային արտադրու-  
թյան իրերի խումբը կազմում են հիմնականում լամպերը, կերոսինները, հիմքաեռնե-  
րը: Սրանք այն իրերն են, որոնք XX դարասկզբին նույտ գործեցին հայոց ավանդա-  
կան կենցաղ: Արարատառ արձանագրություններով իրերի խմբում կարող է ընդ-  
գրկվել ցանկացած իր, որն իր վրա ունի արարատառ արձանագրություն՝ անկախ  
գործառություն կամ թեմատիկ պատկանելությունից: Այս բազմազանությանը հան-  
դերձ ԴԱՅՈՑ (ՍՅՈՒՆԱՊՊԱԹ) -ի «Ակ-3» ֆոնդում առանձնանում է առարկաների մի  
խումբ, որը մի տեսակ միջանկյալ դիրք է գրավում խոհանոցային և ճաշի համալիր-  
ների միջև: Դրանք սիմիներն են, որոնք հավաքածուում ներկայացված են ավելի  
քան 100 օրինակով և իրենց յուրահատկություններով առանձնանում են ամբողջ  
հավաքածուից թե պատրաստման տեխնիկայով և թե հայոց ավանդական  
կենցաղում իրենց ունեցած մեծ դերով ու նշանակությամբ:

Սինիները XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայոց մեջ օգտագործվող  
կենցաղային սպասքի ամենաուշագրավ նմուշներից են: Դրանք հիմնականում  
շրջանածկ են, իրենց տրամագծի համեմատ ունեն ծանծաղ խորություն (3-4, իսկ  
երբեմն նաև՝ 5սմ) և ամենատարեր չափեր (ՀԱՅԹ-ի հավաքածուի ամենափոքր  
սինին ունի 26, իսկ ամենամեծը՝ 90 սմ տրամագիծ): Ըստ չափերի էլ սինիները  
կատարել են ամենատարեր գործառություններ՝ փոքր և միջին չափերի սինիները (25-  
30 և 30-45 սմ տրամագիծ ունեցողները) օգտագործվել են որպես մատուցարան,  
իսկ 50 և ավելի սանտիմետր տրամագիծ ունեցողները՝ որպես ճաշասեղան<sup>1</sup>:

Ինչպես նշում են ակադեմիկոսներ Հր. Աճառյանը, Ստ Մալխասյանը և այլոք  
իրենց աշխատություններում՝ «սինի» բառը փոխառյալ է պարսկերենից և նշանա-  
կում պղնձե մեծ ափսե<sup>2</sup>: Ժամանակակից հայոց լեզվի բառարաններում այս բառի

<sup>1</sup> Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 172, Յովսեփյան Հ., Պարադադի հայերը 1  
(ազգագրություն), Երևան, 2009, էջ 275:

<sup>2</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 215, Մալխասյան Ստ.,  
Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 215:

հոմանիշներն են սկուտեղ, մատուցարան<sup>1</sup> բառերը: Մեր ուսումնասիրության առարկան լիարժեք լուսաբանելու համար նախ տաճք այս բառերի բացատրությունները, սկուտեղը փոխառյալ է լատիներեն *scutella* (սկուտելլա) բառից, որ նշանակում է սկավառակ<sup>2</sup>: Մատուցարան բառը հայերենում ունի երկու իմաստ:

1. այս բառն օգտագործվում է սինու իմաստով,
2. որպես զոհարան, զոհասեղան<sup>3</sup>:

Այս անվանումներից յուրաքանչյուրն իր հերթին համահունչ է մեր ուսումնասիրության առարկային, քանզի դրանք ունեն սկավառակածներ (շրջանաձևներ), պատրաստված են պղնձից և նախատեսված են նատուրելու համար, սակայն մենք հարազատ կմնանք սինի բառին, քանզի այս բառն առավել կիրառելի ու ընդունված է ժողովրդի մեջ:

Չնորանանք նշել, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբում հայոց կենցաղում օգտագործվող շատ իրեր նույնպես կոչվում են սինի, բայց չունեին այն կառուցվածքը, որպիսին ունեն սինիները (ծանծաղ խորությամբ, համեմատաբար մեծ տրամագծով պղնձե ափսեները): Օրինակ, նշված ժամանակահատվածում հայ ժողովրդի կենցաղում օգտագործվել են նաև մեծ ափսեներ, որոնք օգտագործվել են որպես մատուցարան (ասենք փառ կամ մի ուրիշ ինչ-որ բան մատուցելու համար՝ ուսական «բյուլցայի» նման), որի պատճառով է անվանվում են ափսե-մատուցարան: Սրա մասին հետաքրքիր հիշատակում կա Պ. Պոռշյանի «Կոնունք» պատմվածքում, որտեղ ասվում է. «Փլավի վերջերջին քահանան հրամայեց սպասավորներին բերել կնքահոր պատիվը»:

Մի պղնձյա բոլորակ սկուտեղի վրա սպասավորը բերեց մի հաստ ձվածեղ և դնելով կնքահոր առաջն ասաց....»<sup>4</sup>: Այսինքն՝ ափսեի ծև ունեցող մատուցարան (կամ՝ ծևով ափսե, գործառույթով՝ մատուցարան):<sup>5</sup>

Սինի (բրբ. սպա) էին անվանվում նաև ծղոտից հյուսված շրջանաձև կամ օվալածն որոշակի խորություն ունեցող իրերը, որոնք օգտագործվում էին հայոց ավանդական կենցաղում՝ զանազան պետքերի համար: Գոյություն ունեին նաև փայտե սեղան-մատուցարանները (բրբ. խոնչա), որոնք ուղղանկյուն կամ օվալածն էին: Կախված իրենց չափերի՝ սրանք նախատեսված էին մեկ կամ մի քանի մարդու համար<sup>6</sup>:

Պղնձե սինիներն են, որոնք XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայոց ավանդական կենցաղում գործածվող պղնձագործական արտադրանքի մեջ իրենց ուրուս տեղն ունեն և իրենցից մի առանձին արժեք են ներկայացնում թե՛ պատրաստման տեխնիկայի բարդությամբ ու նրբությամբ, թե՛ շրեն ու բովանդակալից գեղագարդմանը և թե՛ հայոց ավանդական կենցաղում ունեցած իրենց կարևոր դերով ու ջանակությամբ:

Այսպես. մետաղի մշակությունը մարդկությանը հայտնի է հնագույն ժամանակներից: Դեևա մ. թ. ա. V հազարամյակից մարդիկ սկսեցին լայնորեն օգտագործել պղնձը իրենց զանազան կարիքների համար: Պղնձից պատրաստում էին աշխա-

<sup>1</sup> Սուրիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան 1967, էջ 441, Աղայան Ե. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան (շարունակվում 7-Ֆ), Երևան 1976, էջ 1301, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1980, էջ 298:

<sup>2</sup> Անապամ Յո., նշվ. աշխ. էջ 231, Առ. Սալիմասեանց, նշվ. աշխ. էջ 230, Նոր բառար հայկագետան լեզուի, հասողությունը, Երևան, 1981, էջ 722:

<sup>3</sup> Սալիմասեանց Առ., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան 1944, էջ 270, Սուրիասյան Ա., նույն տեղում, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1974, էջ 488:

<sup>4</sup> Պոռշյան Պ., Երկրի ժողովածու, հ. 6, Երևան, 1964, էջ 474:

<sup>5</sup> Յակոբ ճեւալեանի նույնառավությանը կատալոգ, Երևան, 2008:

<sup>6</sup> Մարտիր Ա. Տ., Ինտերվեր արմանական հայոց խևաս (առօրյա ու հայության 20-օր առաջ), Արմանական էթնոգրաֆիա և ֆոլքլոր, Երևան 1989, ս. 106.

տանքային գործիքներ, գենքեր, կենցաղային իրեր և նույնիսկ զարդեր<sup>1</sup>: Ավելի ուշ՝ մ. թ. ա. II հազարամյակում մարդկությունը հայտնագործեց երկար, որը շրջադարձային դեր ունեցավ մարդու կյանքում՝ գործունեության ավելի լայն հնարավորություններ տալով մարդում<sup>2</sup>: Սակայն երկաթի հայտնագործումից հետո էլ պղնձի և պղնձագործության դերը չնվազեց մարդու կյանքում: Ինչպես բոլոր արհեստները, նույնպես և պղնձագործությունն իր աստիճանական զարգացման արդյունքում արդեն վաղ միջնադարում համարվում էր ինքնուրույն արհեստ և ուներ իր ցուլերը՝ կաթսայագործություն, ջահաշինություն, աշխանակաշինություն և այլն<sup>3</sup>: Պղնձե իրերի պատրաստման եղանակները շատ չեն, բայց գոյություն ունեցողներն ել բավական էին պղնձից ամենաբազմազան իրեր պատրաստելու համար: Օգտագործվում էին հիմնականում կրամն, դրոշման, զոդման, փորագրման, և անագապատման եղանակները: Եթե կրամն, զոդման և դրոշման եղանակներով պատրաստում էին իրեր, վերջնական տեսք տալիս նրան, ապա փորագրման եղանակն օգտագործվում էր իր գոյությունը ունեցողների նման անցել է իր զարգացման հաջորդական փուլը, դրույթ արհեստների նման անցել է բնակող հատկանիշը ըստ մեր դիտարկման դա գեղագրություն էր:

Արդեն նշեցինք, որ, հայոց ավանդական կենցաղում ընդհանրապես և XIX դարի վերջին ու XX դարի սկզբին մասնավորապես, լայնորեն օգտագործվում էր պղնձե ամանեղենը, որի ամենաաշքի ընկամող հատկանիշը ըստ մեր դիտարկման դա գեղագրություն էր:

Սովորաբար առօրյա գործածության առարկաների գեղագարդումը շատ պարզ է. գեղագարդվում են անոթների վագի հատվածը կամ իրանը, կամ է՛ անբողջ իրը, որը, սակայն, ավելի քիչ է հանդիպում: Զարդամուտիվներն ել հիմնականում բուսանախաւ են, որոնք այս դեպքում նույնպես խորհրդանշում են պտղաբերություն, առատություն: Այդպիսի բուսանախչերով, իսկ ավելի ճիշտ՝ ծաղկաշղթաներով են զարդարված, օրինակ, կովկիրները: Նոյն պարզունակ կերպով են զարդարված նաև ջրիմիկներն ու ջրի դուլերը: Զարդանախշան արվեստը նոր որակ և իմաստ է ծեռք բերում վերը նշված ափսե-մատուցարանների վրա. զարդանախշվում է հիմնականում ափսեի նշված ափսեական կենտրոնական մասը: Այստեղ նոյնպես գերիշխում են շուրջանական անոթները, չնայած, որ դրանք երբեմն նաև հատակի կենտրոնական մասը: Այստեղ նոյնպես գերիշխում են բուսական նախշերը, չնայած, որ դրանք երբեմն նիստ երկրաչափականացված են<sup>4</sup>: Բուսական նախշերը, չնայած, որ դրանք երբեմն նիստ երկրաչափականացված են պարզապես արվեստն իր կատարյալ դրսերումներն են: Այս ամենով հանդերձ՝ գեղագարդման արվեստն իր կատարյալ դրսերումներն են ստանում սինիների վրա: Ասվածն առավել պարզ դարձնելու համար ևս մեկ անգամ անդրադարձանը վերը նշված այն իրողությանը, որ սինիները, շնորհիկ իրենց ունեցած գործառույթների, կարևոր դեր ունեին հայոց ավանդական կենցաղում:

Այսպես. «Հայութերծօրիներ. - Երեկոյան ժամերգությունից յետոյ քահանան փեսայի բարեկամաների հետ գալիս է տղայի տունը: Այստեղ հարսի հանդերձը, որ քեր է կոչ վում, մի սկսութեղի վրայ դրած առաջ են բերում: Այս հանդերձը, որ փեսացուի տերն է վում, մի սկսութեղի վրայ դրած առաջ են բերում: Այս հանդերձը, որ փեսացուի տերն է պատրաստել տալիս և ընծայում հարսին՝ բաղկանում է հետևյալ կտորներից. մի քիւրը, մի շապիկ, մի գոտի, մի չարղաթ և մի գոյգ կօշիկ: Սկսութեղի վրայ դրած է լինում նաև մի շուրջանական առաջ՝ թագուս շաքար և մի ֆունտ թե՛: Երբ սկսութեղը դրում են քահանայի առաջ՝ թագուսը վերցնում է իր գլխարկը և դրում վերան, քաւորն էլ իր թուրը պատեանով են երկարացնում է գրակի կողքին: Ասպա թագուսը, քաւորը և փեսացուի տերն են սկսութեղի առաջ և այսպես սպասում, մինչև որ քահանան օրինում է հանդերձը: Ասպա թագուսը վերցնում է իր գլխարկը և դրում վերան, քաւորն էլ իր թուրը պատեանով բռնում: Ամսեն էլ վերցնում է քաւորի մի ազգականուիկն (հարսը կամ քոյրը):<sup>5</sup>

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հատոր 1, Երևան, 1971, էջ 118:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 376:

<sup>3</sup> Արքահամայն Վ., Արհեստները Հայաստանում չորրորդ դարերում, Երևան, 1956: Առաջապահ Բ., Բաղաբեր և արհեստները Հայաստանում իմնից տասներեքրորդ դարերում, Երևան, 1958:

<sup>4</sup> Յակոբ ճեւալեանի նույնառավությանը կատալոգ, Երևան, 2008:

<sup>5</sup> «Ազգագործական հանդես», 1898, գիրք 1, էջ 219:

Դանդերձ օրիներ.— Գալիս է քահանան. հարսնացուի հարսանեկան շորերը մի սկզբունքի մեջ դրած առաջ են բերում և դնում թագուլորի և խաչեղբօր առաջ. քահանան օրինում է և ստանում խաչեղբօրից 60 կ.-1 ր. և միևնույն հանդիսավաններից մի քանի կողմէկ: Սպա խաչեղբայրը վերցնում է հարսնացուի գոտին, իսկ հանդերձը տանում են սենյակի այն նասը, որ կապերտներով առանձնացրել են: Այստեղ նոյն, հանդերձներ ծևող կինը հագցնում է հարսին, գլուխը կապում և ապա խաչեղբօրը կանչում գոտին կապելու: Գալիս է սա մի նուեր գլուխ-կապէք, տալիս այդ կնոջը և կապում գոտին՝ ասելով. «Արջինեկո տղայ ըլի»: Սպա երկու կին բռնում են հարսնացուի թերից և բերում թագուլորի կողքին կանգնեցնում: Սօտենում է աղջկա հայրն և ծեռք ծեռքի տալով պասակուղներին, օրինում ասելով. «Ծլիք, ծաղկիք, մի բարձի ծերանար, որդեռանց ու բռների տեր ըլիք, դուշմանի սրտով չլիք, չար նիարից Աստուած հեռու պահ ծեզ»: Սպա քահանան է օրինում և բոլորը ուղարկում են դեպի Եկեղեցի»<sup>1</sup>: Կամ «Առավոտյան, գուշնայի առաջին իսկ ծայնը լսելուն պես, բոլորը կրկին հավաքվում են հարսի պսակազգեստի օժնանը՝ ըքթէ օրիներ-ին: Քահանա օժում էր փեսայի հարսին ուղարկած պսակազգեստն ու դրա հետ մեկտեղ, նաև աներոջ՝ փեսային մատուցած նվերը՝ գոտի կամ փեսացուի զգեստի որևէ մաս, որոնք դարսվում էին սինու մեջ: Դնում հարսը վարագույրի ետև՝ պուճախ-ում էր մնում, սպական վերջին ժամանակներս նրան սկսել են դուրս բերել ու կանգնեցնել փեսայի կողքին: Նրանցից ամեն մեկին մեկ վառվող մոմ էին տալիս: (Եթե նշանադրության ժամանակ հարսին մատանի չին տվել, ապա տալիս էին հիմա): Այսուհետև հարսը նորից վարագույրի ետևն էր անցնում, ուր նրան հագցնում էին օժված պսակազգեստը և գլուխը կապում էին՝ կլօխը կապել, այսինքն՝ հասարակ աղջկական գլխաշորը հանում և ամուսնացած կնոջ գլխաշոր էին կապում: Նրա գոտին քավորն էր կապում և մեջքին խփելով բարեմաղբում էր, որ աստված նրան քաջ որդի պարգևի<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, բոլոր դրվագներում, հարսի զգեստը դրված է սինու մեջ, իսկ երկրորդ և երրորդ դրվագներում ուշագրավ է մի պահ՝ խաչեղբայրը կամ քավորը հարսնացուի մեջքին է կապում գոտի: Սովորաբար հարսանեկան գոտիները կտորից էին և ոչ թե արծաթից և իրենց վրա ունեին «Ի Վայելումն կապողին...» բովանդակությամբ գրություններ. այս արարողության ժամանակ կարող էր գործածված լինել, օրինակ, համար 203/2 սինին, որը, իր շենք գեղազարդումից բացի, ունի նաև հետևյալ արձանագրությունը. «Ի ՎԱՅԵԼՈՒՄ ԳՐԻԳՈՐ ՄԵՐԱՍԴՈՒԼԵԱՍ Ի 1863 ԱՄԻ Ի ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ և ԳՐԵՑԻՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ. ՅՈՒՋԱՍԵՍ ԳՐԻ-ԳՈՐԵԱՍՑ ԸՆՈՐԻՒ, ԽԱԶՈՐԴՈՇ ՈՐ Է ԱՅՍ ՏԵՐ ԶԱՔԱՐԵԱՍՑ Ի ՄԵՐՈՒ»: Սրան անդրադարձանք այն տեսանկյունից, որ ինչպես գոտիները, որոնք «ի Վայելումն» նադրանով էին նվիրվում, այնպես էլ սինիները, որոնք իրենց վրա կրում էին հենց նվերը, հանդիսանում էին մեծ կարևորություն ունեցող իր այդ նվերի համալիրում, քանզի հենց սինիների վրա էին նշվում բարեմաղբանքները: Անդրադարձանք նաև սինիների վրա արված զարդանախչերին: Բնականաբար՝ այն սինիները, որոնք ծառայել են որպես ճաշատեղան ընտանիքի ավագ անդամների և, մասնավորապես՝ հյուրերի համար, ունեն արագել խնամքով արված և բովանդակալից զարդանախչում: Ասպածն ավելի ամբողջական դարձնելու համար նախևառաջ անդրադարձանք զարդանախչերի խորհուրդ իմաստին ընդհանրապես և դրանց դրսնորումներին՝ սինիների վրա: Արդեն վաղուց հայտնի է, որ զարդանախչման արվեստը նույնան հին է, որքան մարդկությունն ինքը: Այս պահից, երբ մարդ արարածը փորձեց հասկանալ և ընկալել շրջապատող աշխարհը, փորձեց նաև յուրովի վերարտադրել ու իմաստավորել իրեն շրջապատող բնությունն ու նրանում տեղի ունեցող գործընթացները: Մարդկության այս գգտումն իր դրսնորումներն արտահայտեց ժայռապատկերների տեսքով, այնուհետև՝ իր կողմից ստեղծված և իրեն անհրաժեշտ

խեցեղեն, հետագայում նաև մետաղե իրերն այս կամ այն չափով կամ կերպով զարդանախչելու միջոցով<sup>1</sup>:

Սկզբնական շրջանում այդ պատկերներն ու նախշերը շատ պարզունակ էին և հիմնականում՝ գծայնացված: Սպական ժամանակի ընթացքում, մարդկության զարգացմանը համընթաց կատարելագործվում են նաև այս նախնական պարզունակ զարդաները (կամ՝ զարդանախչման գուգընթաց՝ զարդանում, կատարելագործվում է զարդանախչման արվեստը, աստիճանաբար ավելի կատարյալ և հստակ տեսք են ստանում զարդաները (կամ՝ զարդանախչման գուգընթացվում): Տարանջատվում են դրանց հիմնական խնդերը՝ երկրաչափական (ալիքագծեր, եռանկյուններ, շեղանկյուններ, կեղծխաչեր և այլն), բուսական (հիմնականում՝ կենաց ծառերի տարրերակներ) և կենդանական (առյուծ, ցոլ, խոյ), իսկ երեսն էլ բուսական զարդանախչերի խումբը համեմ է գալիս երկրաչափականի հետ գուգորդված ծևով. պատկերվում են բուսական զարդահորինվածքներ, կամ պարզապես զարդանախչեր, որոնք, սպական, իշխատ գծայնացված՝ երկրաչափականացված են:

Այսպիսով՝ վերը նշվածից պարզ է դառնում, որ մեր ուսումնասիրության առարկան (սինիները) հանդիսանում են XIX դարի XX դարի սկզբի պղնձագործական արտադրանքի բարձրարժեք նմուշները, որոնք հայոց ավանդական կենցաղում ունեցած իրենց կարևոր գործառույթով հանդերձ արտահայտում են նաև դրանք պատրաստող վարպետների, ինչպես նաև պատվիրատուների գեղագիտական բարձր ճաշակն ու զգացողությունը, դրա հետ մեկտեղ առանձնացնենք այն փաստը, որ իրենց կիրառության կարևորությունը կայանում է նրանում, որ սրանք՝ պղնձե սինիները, արտացոլել են տվյալ կիրառողի կենցաղի բարձրաճաշակությունն ու պատահական չեն, որ սրանցով ուտեսար հիմնականում մատուցել են հյուրերին և ընտանիքի ավագ անդամներին, որն ինքնին այս սինիների արժեքնան կարևոր ցուցիչ է:

Artyak Asatryan

## КОЛЕКЦИЯ ПОДНОСОВ АРМЯНСКОГО ЭТНОГРАФИЧЕСКОГО МУЗЕЯ

Подносы имели большое значение в армянском традиционном быту в конце XIX и в начале XX веков. Они в основном круглые, и по размеру использовались по разному; маленькие и средние использовались как лоток, а большие – как столик. Подносы в конце XIX века и в начале XX века в меднодельческом производстве Армении считаются высокоценными образцами, которые в армянском традиционном быту имели многофункциональную роль и значение. Отметим также тот факт, что они выражают эстетические нравы и мастера-изготовителя, и клиента. Любой из подносов своеобразен и считается покозателем и наследием культурного развития того времени.

Artak Asatryan

## THE COLLECTION OF TRAYS OF THE NATIONAL MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY AND HISTORY OF LIBERATION STRUGGLE

The trays are one of the most prominent samples of household utensils in the Armenian home of the late 19th and early 20th centuries. They were placed on an ottoman /on a low stool/, or on the carpet on the floor and were used as tables - with family members and guests sitting around them cross-legged. They are mainly circular with flat bottom, slightly lengthened trunk, flat lip, shallow depth and in various sizes. According to the size they had different use, for example the small trays /25-30sm and 30-45sm in diameter/ were used as salvers, the large ones /50sm and more in diameter/ as tables.

The trays are highly valuable samples of copper-making production of the late 19th and early 20th centuries and with their usage and role in the Armenian traditional life they express the aesthetical taste and feelings for the beauty of the Armenian craftsmen. Each sample of the collection with its finely decorated patterns and usage expresses the world outlook of the people who used them as well as the thinking and morals and manners of the time.

<sup>1</sup> Մանավական համեմս, 1902, գիր 9, էջ 233:

<sup>2</sup> Լիսիցյան Արք., Դարաբաղի հայերը, Դայ ազգագործություն, հ. 12, Երևան, 1981,